Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2020թ. մայիսի 25-ի թիվ 5 նիստում
ԳՊՀ ռեկտոր՝ Ռ. Խ. Հակոբյան
«25» մայիս 2020թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
(փոփոխություններով)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգով սահմանվում է Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ) պրոֆեսորադասախոսական կազմի՝ կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման ծրագիրը իրականացնելու կարգը:

1.2. Կանոնակարգի մշակման իրավական հիմքերն են «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ինչպես նաև «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը և ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագիրը:

1.3. Որակավորման բարձրացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) նպատակն է նպաստել ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ընդհանուր մասնագիտական և մանկավարժա-հոգեբանական իրազեկությունների շարունակական զարգացմանը:

2. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

2.1. Ծրագրի կազմակերպչական աշխատանքներն իրականացնում է ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժինը, ուսումնագիտական գծով պրոռեկտորի գլխավորությամբ, մասնագիտական ամբիոնների առաջարկությունների հաշվառմամբ, պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ներկայացված կարիքների բավարարման նպատակով:

2.2. Ծրագրի բովանդակային հարցերով, ըստ կրթամասերի ու բաղադրիչների ընդհանուր պատասխանատվություն են կրում ԳՊՀ բոլոր մասնագիտական ամբիոնները, իսկ դասախոսների հոգեբանամանկավարժական իրազեկությունների զարգացման գծով՝ Հասարակական գիտությունների ամբիոնը:

2.3. Սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան ԳՊՀ ռեկտորի հրամանով հաստատվում է Ծրագրի պլանը։
2.4. Կրթական մոդուլների ուսումնական ծրագրերը մշակվում են պատասխանատու ստորաբաժանումների (ֆակուլտետ, ամբիոն) կողմից։
2.5. Ծրագրի շահառուները ԳՊՀ կայքի միջոցով իրազեկվում են կազմակերպչական հարցերի վերաբերյալ։
2.6. Ծրագրին մասնակցության հայտի ձևաթուղթը, դասընթացների ցանկը, ժամանակացույցը, օգտակար հղումները տեղադրվում են ԳՊՀ կայքում։ Ունկնդիր դասախոսը լրացնում է մասնակցության հայտի ձևաթուղթը՝ ընտրելով դասընթացներ տվյալ ուստարվա համար։
2.7. Ծրագիրը սահմանված է հնգամյա շրջափուլով՝ սկսած 2017-2018 ուսումնական տարվանից։ Դասերի հնգամյա բեռնվածությունը կազմում է 30 կրեդիտ, որից 10 կրեդիտը՝ հոգեբանամանկավարժական կրթամասից, 10 կրեդիտը՝ ակադեմիական օտար լեզուների/լեզվի դասընթացներից, իսկ 10 կրեդիտը՝ մասնագիտական դասընթացներից։
2.8. Ակադեմիական քաղաքականության բաժինն իրականացնում է ստացված հայտերի կազմակերպական-տեխնիկական ընտրությունը։
2.9. Բոլոր մոդուլները (դասընթացները) ավարտվում են ատեստավորմամբ (քննություն կամ ստուգարք)։
2.10. Դասախոսների կողմից ԳՊՀ-ից դուրս անցած վերապատրաստումների արդյունքները ճանաչվում են, եթե դրանք հաշվարկված են կրեդիտներով։
2.11. Որակավորումների բարձրացման ծրագիրն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած ունկնդրին գիտական խորհրդի որոշմամբ տրվում է սահմանված նմուշի փաստաթուղթ՝ վկայական։
2.12. Յուրաքանչյուր մասնակից դասախոս ինքն է ընտրում իր անհատական ծրագիրը և տարեվերջին տալիս հաշվետվություն՝ համապատասխան կրեդիտները հավաստող փաստաթղթերի ներկայացմամբ։
2.13. Ամբիոնները և ֆակուլտետները վերահսկում են իրենց դասախոսական համակազմի կողմից Ծրագրի իրականացումը՝ այդ մասին ամենամյա հաշվետվություններ ներկայացնելով ԳՊՀ գիտական խորհրդին։